ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՂԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԵՎ ԴԵՊ ՄԻՋՈՑՈՎ

NCPPR

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ԵՒ ԴՐԱ ՄԻՋՈՑՈՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2018

The U.S. Embassy in Armenia

Սույն ուսումնասիրությունը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Ուսումնասիրությունում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Սույն ձեռնարկը նախատեսված է պետական գնումների համակարգը ուսումնասիրող ՋԼՄ-ի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:

Ձեռնարկը ներկայացնում է այն քայլերի համախումբը, որոնք հնարավորություն կտան ծանոթանալ պետական գնումների հիմնական պահանջների, ինչպես նաև դրանց կատարման ընթացքը վերահսկելու գործիքակազմի հետ:

Հուսով ենք ձեռնարկը օգտակար կլինի պետական գնումների համակարգի միտումների մոնիտորինգի գործընթացում:

Հարգանքով,

Հանրային քաղաքականության հետազոտությունների
ազգային կենտրոն ՀԿ նախագահ՝

Արտակ Մանուկյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

NCPPR

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ
Հասցե՝ք. Երևան, Մանուշյան փող, 101
www.policyobserver.am
www.facebook.com/PolicyObserver/

Ձեռնարկի ձևավորումը և տպագրությունը՝ “Մեծ Մատիտ” ՍՊԸ / www.print.am

Ինչ է պետական գնումը և ինչքան են պետգնումների ծավալները

Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի **գնում է համարվում** պատվիրատուի հատուցմամբ՝ **ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը,** լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքների շրջանակներում մասնավոր հատվածի գործընկերոջը իրավունքների շնորհումը.

2017թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են շուրջ 1,504 մլրդ դրամ:

Պետական ծախսերի դինամիկան ուսումնասիրելիս նկատում ենք, որ աշխատանքի վարձատրության ծախսերը կազմել են 145 մլրդ դրամ (10%), իսկ պետական գնումների տարր պարունակող ծախսերը վերջին տարիներին ՀՀ-ում կազմում են պետբյուջեի շուրջ 30%, մասնավորապես 2017թ. արդյունքներով շուրջ 154 մլրդ դրամ է ծախսվել ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերման վրա (10%), իսկ հիմնական միջոցների գծով ծախսերը կազմել են 238 մլրդ դրամ (16%):
Պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին 2017 թվականին կատարվել են եւս 36 մլրդ դրամի ծախսեր: Նշված 36 մլրդի շուրջ 13 մլրդ դրամը (37%) կազմել են աշխատավարձային ծախսերը, 9.5 մլրդ դրամ՝ ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերման ծախսերը (26%), իսկ 7.9 մլրդ դրամը՝ հիմնական միջոցների ձեռքբերմանը (22%):

Արդյոք սրանք են պետական գնումների ողջ ծավալը:

Ոչ, ներառված չեն օրինակ միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում իրականացված գնումները: Դրանք իրականացվում են ըստ վարկատու կազմակերպության գնումների ընթացակարգերի, օրինակ՝ Համաշխարհային բանկի տրամադրած գումարների շրջանակներում ձեռքբերումներն իրականացվում են Համաշխարհային բանկի ընթացակարգերով:

Արդյոք պետգնումների համակարգի միջոցով իրականացվող գնումները իրականացվում են բացառապես էլեկտրոնային եղանակով՞:

Ցավոք, ոչ բոլոր պետգնումներն են իրականացվում էլեկտրոնային եղանակով, մասնավորապես ՀՈԱԿ-ի, ՊՈԱԿ-ի գնումները առավելապես իրականացվում են թղթային եղանակով: 2017թ-ին Հայաստանում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գծով պայմանագրային պարտավորություններից միայն 180 մլրդ դրամն է (շուրջ 40%) գեներացվել էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Քայլ 1. Գնումների պլանավորում

«Պետության կարիքների համար նախատեսված գնումների» մասին տեղեկությունները չափազանց կարևոր նշանակություն ունի, քանի որ այս տեղեկությունը ցույց է տալիս գերակայությունները: Պետության կարիքների համար նախատեսված գնումների տեղեկատվությունը հնարավոր է հայթայթել երկու աղբյուրների հիման վրա:

1.1 Պետական բյուջեի փաստաթղթերում առկա գնումների հավելվածում տեղադրված տեղեկատվության ուսումնասիրություն (Հավելված 12): Սույն հավելվածը առկա է լինում ՖՆ կայքում **www.minfin.am** կայքի պետական բյուջե հատվածում տես գծանկար 1:

Գծանկար 1. Պետական բյուջեի հավելված 12

Հավելված N 12

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին՝ ներառյալ սույն որոշմամբ կատարված փոփոխությունները, պետության կարիքների (բացառությամբ արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկների և ներկայացուցիչների գործունեության ապահովման ծրագրերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ արտաքին դոնորների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող նպատակային ծրագրերի) համար 2018 թվականին իրականացվող գնումների պլանը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական/գործառական դասակարգման

Կոդը	Անվանումը			Գնման ձևը	Չափման միավորը	Միավորի գինը	Քանակը	Գումարը (հազար դրամով)
<< Նախագահի աշխատակազմ								279,518.9
Բաժին N 01	Խումբ N 01	Դաս N 01	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում					279,518.9
1. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում								253,776.2
	ՄԱՍ I. ԱՊՐԱՆՔՆԵՐ							114,428.0

1.2 Պետության կարիքների համար նախատեսված գնումների վերաբերյալ տեղեկությունները առկա են ARMEPS գնումների պորտալում (**https://armeps.am/ppcm/public/procurements**)

Այստեղ հնարավորություն կա ընտրել, տարին, մարմինը, գնման առարկան (Գծանկար 2): Պետք է նշել, որ այստեղ ներկայացված տվյալները ի տարբերություն հավելված 12-ի հնարավոր է ներբեռնել ինչպես էքսել ֆորմատով, այնպես էլ CSV ֆորմատով:

Գծանկար 2. Գնումների պլանների առկայությունը Armeps համակարգում



1.1 Պլանավորված գնումների ուսումնասիրության նպատակը

Կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման տեսանկյունից կարևոր դերակատարում ունեն պլանավորված գնումների ուսումնասիրությունը, մասնավորապես դրա շրջանակներում պետք է հարցադրումներ կատարել որքանով են դրանք հիմնավոր ու համահունչ ռազմավարություններին: Օրինակ, որքանով է նպատակահարմար ամեն տարի դյուրակիր համակարգչի ձեռքբերումը, որքանով է նպատակահարմար թվայնացմանը զուգահեռ թղթի ծախսի ավելացումը և այլն:

Տիպային կարմիր դրոշների օրինակ են կլոր թվերը, ինչպես քանակային, այնպես էլ գումարային:

<< Արարատի մարզպետարան							118,244.8
Բաժին N 01	Խումբ N 01	Դաս N 01	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում				30,963.8
1. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում							30,963.8
	ՄԱՍ I. Ա Պ Ր Ա Ն Ք Ն Ե Ր						9,899.9
09132200-1	բենզին, ռեգուլյար		ԳՀ	լիտր	400.0	18,000.0	7,200.0
09211100-1	շարժիչի յուղեր		ԳՀ	լիտր	3,000.0	227.4	682.2
09211650-1	արգելակի հեղուկ		ՄԱ	հատ	1,000.0	6.0	6.0
22311600-1	շնորհավորական բացիկներ		ՄԱ	հատ	500.0	100.0	50.0
22411200-1	նամականիշներ		ՄԱ	հատ	150.0	1,150.0	172.5
24951310-1	հակասառիչ հեղուկ՝ A դասի կոնցենտրանտ, A-40 դասի՝ 40 C աստիճան սառման ջերմաստիճանով,A-65 դասի՝ 65 C սառման ջերմաստիճանով		ՄԱ	կիլոգրամ	7,400.0	40.0	296.0
30121310-1	գրասենյակային մեքենաների մասեր և պարագաներ		ԳՀ	հատ	1,700.0	25.0	42.5

2. Պայմանագիր կնքելու մասին հայտարարությունների ուսումնասիրություն

Ըստ գնումների մասին օրենքի հոդված 10-ի մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է: Նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պայմանագիր կնքելու մասին հայտարարություններին կարելի է ծանոթանալ գնումների պաշտոնական կայքում՝ **http://gnumner.am/hy/page/paymanagir_knqelu_masin_haytararutyun/**



Պայմանագիր կնքելու մասին հայտարարությունների ուսումնասիրությունը կարևոր է այնքանով, որ այն հնարավորություն է տալիս հնարավոր կոռուպցիոն ռիսկերը ուսումնասիրել և բարձրաձայնել դրանք՝ մինչև պայմանագրի կնքումը:
Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Հիշեք՝ մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

3. Հայտերի ուսումնասիրություն

Պետք է նշել, որ հայտերի ուսումնասիրության և գնահատման փուլից հետո որոշվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը: Տվյալ ընթացակարգը սխեմատիկորեն ներկայացված է նկար 2-ում:

Հայտերի գնահատում



Հիշեք՝ Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց այդ մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

4. Բողոքարկման համակարգի հետ կապված տվյալների ուսումնասիրություն

Կարևոր տեղեկությունն է տալիս բողոքարկման համակարգի միջոցով ստացված բողոքների ուսումնասիրությունը:

Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

ՀԼՄ-ի համար սա հիմք է մասնակիցների դժգոհությունների ուսումնասիրելու և բարձրաձայնելու համար:
Բողոքների մասին հայտարարություններին հնարավոր է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ **http://gnumner.am/hy/page/2018_tvakan/**



Ստացված բողոքների վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում և հրապարակվում է հետևյալ խորագրում



Խորհրդի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

5. Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը

Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1. գնման առարկայի համառոտ նկարագրությունը.
2. պատվիրատուի անվանումը և հասցեն.
3. պայմանագրի կնքման ամսաթիվը.
4. ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և գտնվելու կամ բնակվելու վայրը.
5. մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և պայմանագրի գինը.
6. մասնակիցների ներգրավման նպատակով սույն օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները (եթե կիրառելի են).
7. կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը:

Կնքված պայմանագրերի մասին հայտարարություններին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ. **http://gnumner.am/hy/page/knqvats_paymanagri_masin_haytararutyun/**

Հիշեք՝ Եթե հայտնաբերվում է մասնակցի կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցչի գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական արարք, ապա դրա ի հայտ գալու օրը պատվիրատուն այդ մասին գրավոր տեղեկացնում է իրավապահ մարմիններին:

Հիշեք՝ կարող եք փնտրել նաև ըստ ընթացակարգի ծածկագրի:



6. Գնում կատարելու ընթացակարգերը և փուլերը

Գնում կատարելու ընթացակարգերն են՝

- էլեկտրոնային աճուրդը,
- մրցույթը,
- գնանշման հարցումը,
- մեկ անձից գնումը:

Հիշեք՝ - ***Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է***, եթե գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ նույն մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում: Գնումները կարող են կատարվել գնման այլ ձևերով, բացառապես սույն օրենքով նախատեսված դեպքերում:

Ցուցանիշներ	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Կազմակերպված ընթացակարգեր	1706	15381	8324	25411
Բաց ընթացակարգեր	216	71	163	450
Այդ թվում պարզեցված ընթացակարգեր	126	68	232	426
Շրջանակային ընթացակարգեր	194	7398	456	8048
Մրցակցային երկխոսություն	1	1	1	3
Գնանշման հարցում	267	716	288	1271
Բանակցային ընթացակարգ հայտարարելով	79	15	78	172
Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության և մեկ անձ	823	7112	7106	15041

Պետք է նշել, որ մեկ անձից ձեռք բերումները և բանակցային ընթացակարգերը առանց հայտարարության պետք է դիտարկել որպես ոչ մրցակցային գնումների օրինակներ: Պետք է նշել, որ մեկ անձից գնումները մեր կողմից ևս դասակարգվում որպես նվազ ռիսկային (այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված մեկ անձ, օրինակ բնական մենաշնորհներ) ինչպես նաև բարձր ռիսկային մեկ անձից գնումներ, որոնց շարքին ենք դասում այլընտրանքի առկայության պարագայում մեկ անձից ձեռքբերումներ:

Ամփոփ ձևով պետական գնումների համակարգը ըստ փուլերի և գործառույթների նկարագրության կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարի տեսքով:

Գործառութային կառուցակարգ



7. Փաստացի կնքված պայմանագրերի ուսումնասիրություն

Իլրումն «կնքված պայմանագրերի մասին» խորագրում ներկայացված պայմանագրերի ուսումնասիրության համակարգային ուսումնասիրությունների համար կարելի է օգտվել ARMEPS համակարգում տեղադրված պայմանագրերից: ARMEPS գնումների հաշվետվողականության կայքում առկա է հնարավորություն ուսումնասիրել կնքված պայմանագրերն ըստ տարատեսակ ֆիլտրերի, մասնավորապես ըստ պատվիրատուի, ըստ մատակարարի: Նշելով ժամանակահատվածը այդ տվյալները կարելի է արտահանել/ներբեռնել ըստ էքսել և csv ֆորմատների:



Դրանից հետո սկսվում է կոնկրետ հաղթողի ուսումնասիրությունը, դրա համար առաջարկում ենք հետևյալ գործիքների բազմությունը՝

Ա) Սեփականատերերի մասին տեղեկությունների հավաքագրում, որի համար էլեկտրոնային ռեգիստրի կայքում մուտք ենք անում հաղթողի անվանումը



Բ) Ուսումնասիրում ենք հաղթողի պորտֆելը՝ ըստ մատակարարների, գնման առարկաների՝ կոռուպցիոն ռիսկերի վերհանման նպատակով:

Գ) Ուսումնասիրում ենք Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին կատարած վճարումները՝ հայտարարագրած աշխատողների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով



Այդ տեղեկությունները ստանալու համար պետք է մուտքագրել ՀՎՀՀ-ն

3. Ավտոմոբիլների լվացումը՝ հպումով, ոչ ավտոմատ եղանակով, սրահի քիմմաքրում, սրահի մաքրում փոշեկուլի միջոցով, շարժիչի լվացում, թափքի փայլեցում և խազերի վերացում հատուկ նյութերով:

4. Աշխատանքի տևողությունը՝ 1 ավտոմոբիլի համար մինչև 7 - 10 րոպե:

5. Ավտոմոբիլների լվացումը կատարել ճանապարհային ոստիկանության կողմից տրված կտրոններով:

6. Ավտոմոբիլների լվացումը 3 հերթափոխով, հետևյալ ռեժիմով.

1-ին հերթափոխ - ժ. 06^{00} մինչև ժ. 10^{00}
2-րդ հերթափոխ - ժ. 14^{00} մինչև ժ. 18^{00}
3-րդ հերթափոխ - ժ. 19^{00} մինչև ժ. 24^{00} :

7. Ավտոլվացման համար նախատեսված տարածքը ոչ պակաս 200 քառ.մ.

8. Միաժամանակ չորս ավտոմեքենա լվանալու հնարավորությամբ, առնվազն 2 առանձին մուտքերով և 2 առանձին ելքերով, ավտոմեքենաները հերթականությամբ 2 շարքով ավտոլվացման սրահ մտնելու և դուրս գալու հնարավորություն:

9. Ավտոլվացման կետը ունենա առնվազն 4 աշխատող:

10. Ավտոլվացման ընթացքում գունագրաֆիկ ձևավորումը վնասվելու դեպքում՝ վնասի փոխհատուցում :

11. Առանձին փակ սպասասրահի առկայություն:

''ՅՈՒՏԵԿ-ԱՎՏՈ'' ՍՊԸ-ն սեդան թափքով ավտոմոբիլի միավոր մեքենայի ավտոլվացման ծառայությունը մատուցում է 2 100 ՀՀ դրամ, իսկ ունիվերսալ թափքով ավտոմոբիլի միավոր մեքենայի ավտոլվացման ծառայությունը՝ 2 400 ՀՀ դրամ:

Դուք կարող եք տեսնել Ձեր կողմից կատարված վճարումները ՀՎՀՀ-ն կամ ՀԾՀ-ն մուտքագրելուց հետո

Գումարի արտարժույթը՝ ֏ | ₽ | $ | €

01250458 կամ ՀԾՀ Փնտրել

Կազմակերպության անվանում	ՀՎՀՀ	Գումար	Ամսաթիվ
«ՅՈՒՏԵԿ-ԱՎՏՈ»	01250458	3 000֏.	2018-04-30 Դիտել ամբողջը

8. Ինչ չափանիշներ են անհրաժեշտ գնումների համակարգին մասնակցության համար՞:

Գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (ներառյալ նաև Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում):

Առավել իլյուստրատիվ այն ներկայացված է նկար 1-ում:

Պետք է նշել, որ օրենսդրությունը ունի բացառություն, մասնավորապես մեկ անձից գնումների դեպքում չեն կիրառվում վերոհիշյալ սահմանափակումները, եթե

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝

ա. լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

բ. դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով.

3) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը.

4) գնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Նկար 1

Մասնակցության իրավունք եվ որակավորում



Հիշեք՝ Գնման ընթացակարգին արգելվում է փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

9. Ովքեր են իրականացնում հսկողություն պետական գնումների նկատմամբ՞:

Պետական գնումների նկատմամբ հսկողական և վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմիններն են.

- Ֆինանսների նախարարություն
- Պետական վերահսկողական ծառայություն
- Հաշվեքննիչ պալատ
- Ներքին աուդիտի գործառույթ իրականացնողներ

NCPPR

ISBN 978-9939-1-0846-9

9 789939 108469